



ԵՐԱՌԵԱՔԹԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վերին խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:

Զի նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից.

Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:

ԱՊՈԹՔ

Օգնէ մեզի, Տէ՛ր, օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ մեզ եւ քաւէ մեր մեղ-քերը, Քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովա-նիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ Քեզի ապաւինած եւ Քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթու-թեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 86

ԱՂՈԹՔ ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ՄԷջ

Ականջդ ինձի խոնարհեցուր, Տէր, եւ պատասխան տուր ինձի, որովհետեւ աղֆատ եւ ու չֆաւոր:

Պահպանէ զիս, որովհետեւ հաւատարիմ եմ քեզի.

փրկէ զիս՝ քու ծառադ, Աստուածս եւ դուն,
եւ եւ քեզի ապաւինեցայ:
Ողորմէ ինծի, Տէր, քեզի է որ կ'աղաղակեմ օրն ի քուն:
Ուրախացուր զիս՝ քու ծառադ, Տէր,
որովհետեւ եւ քեզի կը բարձրացնեմ աղօթքս:
Դուն, Տէր, բարի եւ եւ ներող,
անչափօրէն հոգատար՝ բոլոր քեզի պաղատողներուն:
Ականջդ դիր, Տէր, իմ աղօթքիս,
նկատի առ բարձրադադակ խնդրանքներս:
Անձկութեանս մէջ եւ քեզի կ'աղաղակեմ,
որովհետեւ դուն պատասխան կու տաս ինծի:
Երկրի վրայ պաշտուած աստուածներուն մէջ
չկայ քեզի նման մէկը, Տէր,
չկայ մէկը որ ընէ ինչ որ դուն կը կատարես:
Բոլոր ազգերն ալ, որոնք դուն ստեղծեցիր,
պիտի գան եւ պաշտեն քեզ, Տէր,
եւ քու անունդ պիտի փառաւորեն:
Մեծ եւ դուն եւ սքանչելագործ, միակ Աստուածը դուն ես:
Սորվեցուր ինծի քու նամբադ, Տէր,
որպէսզի եւ հաւատարիմ մնան քեզի,
աներկմիտ սրտով քեզ պաշտելու համար:
Ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտնեմ քեզի,
ով Տէր, Աստուածս, յաւիտեան պիտի փառաւորեմ անունդ:
Որովհետեւ ինծի հանդէպ մեծ սէր ցուցաբերեցիր,
զիս փրկելով մահուան ստորին աշխարհէն:
Ամբարտաւան մարդիկ վրաս յարձակեցան, ով Աստուած,
անգութ մարդիկ կ'ուզեն վերջ տալ իմ կեանքիս,
առանց քեզի կարեւորութիւն տալու:
Սակայն դուն, Տէր, ողորմած եւ բարեգութ Աստուած եւ,
համբերատար, գթառատ եւ հաւատարիմ:
Նայէ ինծի եւ ողորմէ, զօրացուր զիս՝ քու ծառադ,
փրկէ զիս՝ աղախինիդ որդին:
Բարութեանդ ցուցանիշը տուր ինծի,
որպէսզի ամօթով մնան զիս ատողները,
տեսնելով թէ ինչպէս դուն, Տէր,
օգնեցիր ինծի եւ փաշալեր հանդիսացար:

ԱՂՕԹԸ՝ ԱՆՉԿՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Սկսել է առաջ մեր այսօրուան Սաղմոսի բացատրության, առ ի գիտություն, այս Սաղմոսը մեր եկեղեցւոյ երեկոյեան ժամերգութեան սկիզբի բաժինն է. «Խոնարհեցո, Տէր զունկն քո, եւ լուր ինձ, զի աղբար եւ փնանկ եմ ես»: Այսօրուան 86 այս Սաղմոսը դարձեալ Դաւիթի կողմէ ըսուած Սաղմոս է:

Ամէն բանէ առաջ անդրադառնանք այն իրողութեան, թէ ինչպէս միւս Սաղմոսներու պարագային, այս Սաղմոսն ալ նախ Դաւիթ իր վիճակն է որ կը ներկայացնէ, երբ անձկութեան մէջ է, եւ կարիքը ունի օգնութեան, պաշտպանութեան: Այս Սաղմոսն ալ միւսներուն նման կը ներկայացնէ Դաւիթի մտերմիկ խօսակցութիւնը Աստուծոյ հետ: Թէ ինչ կը սորվեցնէ այս Սաղմոսը մեզի այսօր:

ա. Մեր եւ Աստուծոյ միջեւ մտերմիկ, սրբաւոր խօսակցութիւն: Այնպիսի մտերմութիւնը, ուր Աստուծոյ մարդացեալ կերպարի մէջ ներկայացուած: Խոնարհեցուր ականջդ, եւ լսէ աղօթքս: Այսինքն՝ մտիկ ըրէ: Ինչպէս երբ մէկու մը խօսինք եւ կարծեն, որ չի լսեր, բարձր կը խօսինք, կամ ականջը կ'ուզեն որ մօտեցնէ:

բ. Որքան մտերմ, նոյնքան սակայն ինքնաճանաչումի վիճակ: Աղբար եւ փնանք, չքաւոր: Կը յիշեցնէ Քրիստոսի ուսուցման մէջ հոգիով աղբարներուն վիճակը: Անդրադարձ մեր վիճակին, եւ Աստուծոյ դիմաց մեր անձերը խոնարհեցնելու:

գ. Աստուծմէ կախեալ ըլլալու մեր վիճակը: Քու ծառադ եմ, քեզի ապաւինած եմ:

դ. Աստուծոյ ողորմութիւնը խնդրելու, անով Աստուծոյ ողորմած ըլլալը ճանչնալու: Տակաւին, Աստուծոյ բարութիւնը, ներողամտութիւնը, այլ խօսքով Աստուծոյ նկարագրային գիծերը ճանչնալ ու դաւանիլ, եւ ըստ այնմ դիմել Իրեն:

ե. Ամբողջական վստահութիւն Աստուծոյ: Անձկութեան մէջ Աստուծոյ դիմելու, որովհետեւ աղօթքներուն պարասխնող Աստուծոյ:

զ. Դաւանիլ որ Աստուծոյ Ինք է միակ ու ճշմարիտ Աստուծոյ: Մանաւանդ ինչ որ կը կարարէ չկայ մէկը որ նոյնը կարարէ եւ Աստուծոյ կարարածները սքանչելի:

է. Աստուծոյ ճամբան սորվելու, որպէսզի հաւաքարիմ մնանք Աստուծոյ: Աստուծոյ ճամբան սորվիլ, կը նշանակէ մեր մտածելակերպը ըստ այնմ ըլլալու, եւ ըստ մտածելակերպին, մեր ապրելակերպը ըստ այնմ ըլլալու: Որովհետեւ Աստուծածաշունչին մէջ ճամբայ արքայայտութիւնը ապրելակերպի հետ առնչութիւն ունեցող խորհրդանիշ է: Ապրելակերպը կախում ունի մտածելակերպէ: Պօղոս Առաքեալ Եփեսացիներուն գրած իր նամակին մէջ կ'ըսէ. «ձեր մտածելակերպը փոխեցէք»:

ը. Աներկմիտ սրտով: Աներկմիտ բառին հակառակը միամտութիւնն է: Ուրեմն, մեր մտքերը, սրտերը, խորհուրդները երկմիտ չըլլան, այլ միամտութեամբ Տէրը պաշտելու: Որովհետեւ երկմտութիւնը մեզ կը շփոթեցնէ, եւ այդ շփոթութիւնը կը խանգարէ մեր Աստուծապաշտութեան:

թ. Անդրադառնալ ու գիտակիլ, թէ Աստուծոյ ինչպիսի մեծ սէր մը ցուցաբերեց մեր նկատմամբ: Հեղաքրքականօրէն, այս բաժինը կը ներկայացնէ Քրիստոսի վիճակը, թէ ինչպէս Հայրն Աստուծոյ զինք դուրս բերաւ մեռելներու աշխարհէն: Առաւել յստակ կը դառնան այդ երեւոյթը յաջորդող համարով. «ամբարտաւան մարդիկ վրաս յարձակեցան, անգութ մարդիկ կ'ուզէին վարջ փալ իմ կեանքիս»:

ժ. Հեղաքրքրականօրէն, 16 հմրը. «Տուր զօրութիւն ծառայի քո, կեցող զօրդի աղախնոյ քո, եւ առաւ իս նշան բարութեան»: Այս փողերը եւս, որքան Դաւիթին, նոյնքան, լռելեայն Քրիստոսի մասին ակնարկութիւն: Քրիստոս ինքզինք ծառայի կերպարանք առնելով, Գեթսեմանէյի պարտեզին մէջ երբ զօրութիւն խնդրեց որպէսզի բաժակը ըստ այնմ խմէ: Յիսուս Քրիստոս ինք որդին է Աստուծոյ աղախինին, Մարիամ Աստուծածնին: Երբ առիթով մը Գաբրիէլ հրեշտակը գալով աւերիսը պիտի փար, Մարիամը կ'արքայայտուի ըսելով. «Տիրոջ աղախինն եմ»: Տակաւին, բարութեան նշանը կը խնդրէ. եւ այդ նշանը ուրիշ բան չէ եթէ ոչ յարութեան նշանը, ինչպէս Փարիսէցիները Յիսուսի գալով նշան մը կը խնդրէին, Յովնան մարգարէին նշանէն բացի ուրիշ նշան պիտի չտրուի: Որպէսզի ամօթով մնան, բոլոր անոնք, որոնք զինք արեցին, եւ ըսին, «խաչը հանէ, խաչը հանէ»:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*